

Միջազգային տրանսպորտային միջանցքները և դրանց ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության վրա²

1. Հիմնախնդրի արդիականությունը

և «Միջազգային տրանսպորտային միջանցք» (USU) հասկացությունը

Միջազգային հարաբերությունների համակարգում պետության դիրքի ամրությունը մեծապես որոշվում է նրա տնտեսական զարգացման հաջողության վիճակով, ՀՆԱ-ի մակարդակով, տեխնոլոգիական հագեցվածությամբ, հումքային ներուժով, արդյունաբերական զարգացմամբ, ֆիզիկական աշխարհագրությամբ, ուժային կառույցների արդյունավետությամբ և, իհարկե, տրանսպորտային և հաղորդակցության ենթակառուցվածքներով: Այս բոլոր գործոններն ուղղակիորեն ազդում են երկրի և տարածաշրջանի տնտեսական անվտանգության վրա:

Բոլոր ժամանակներում տրանսպորտային երթուղիները նպաստել են առևտրային հարաբերությունների աճին և նախադրյալներ ստեղծել պետությունների զարգացման համար: Պատմականորեն տրանսպորտային հաղորդակցությունները եղել և շարունակում են մնալ ժողովուրդների, պետությունների, քաղաքակրթությունների և մայրցամաքների միջև բազմազան (առևտրային, տնտեսական, մշակութային, քաղաքակրթական, քաղաքական և ռազմական) հարաբերությունների զարգացման կարևորագույն միջոց: Հին աշխարհում և միջնադարում Արևելյան Ասիան Միջերկրական ծովի և Եվրոպայի հետ կապված էր քարավանային ճանապարհով, որն աշխարհին հայտնի է որպես «Մեծ Մետաքսի ճանապարհ»: Այս եզրույթը 1877 թ. շրջանառության մեջ է դրել գերմանացի աշխարհագրագետ Ֆերդինանդ ֆոն Ռիխտհոֆենը: «Մեծ Մետաքսի ճանապարհը» ի հայտ է եկել Ալեքսանդր Մակեդոնացու նվաճողական արշավանքներից հետո, ինչը հնարավորություն է տվել զգալիորեն ընդլայնել Արևմուտքի և Արևելքի միմյանց մասին իմացությունը և նախադրյալներ ստեղծել առևտրային կապերի հաստատման համար: Իսկ «Մետաքսի ճանապարհ» անվանումն արտացոլում էր Չինաստանից արտահանման հիմնական ապրանքը՝ մետաքսը:

¹ Քաղաքական գիտությունների դոկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր: Ավարտել է Սարատովի Ն.Գ. Չերնիշևսկու անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Պատմաբան, քաղաքագետ, հակամարտաբանության, քաղաքականության և անվտանգության հարցերով փորձագետ, հետազոտական հետաքրքրության առարկա են թուրքագիտությունը, իրանագիտությունը, հայագիտությունը (ներառյալ՝ Ղարաբաղյան հիմնախնդիրը), կովկասագիտությունը: Հեղինակ է հիմնարար գիտական հետազոտության՝ «Պանթուրքիզմը Կովկասում Թուրքիայի աշխարհառազմավարության մեջ» մենագրության, ինչպես նաև տարբեր պարբերականներում հարյուրավոր գիտական և վերլուծական հոդվածների:

² Հոդվածը բերվում է թարգմանաբար: Ռուսերեն բնագիրը խմբագրություն է ներկայացվել 28.04.2025 թ.:

Այդ ժամանակից ի վեր և մինչ օրս մարդկությունը ճանաչել է տարանցիկ հաղորդակցությունների շատ նոր երթուղիներ, որոնք, մի կողմից, դարձել են տեխնոլոգիական առաջընթացի հետևանք, քանզի ճանապարհների և տրանսպորտային միջոցների որակը մշտապես ուղղակիորեն կախված է գիտատեխնիկական զարգացումից, իսկ մյուս կողմից՝ բնական տնտեսական համագործակցությունից և միջազգային մրցակցությունից:

Նոր ճանապարհները (տրանսպորտային հաղորդակցություններ և միջանցքներ) միշտ էլ փոփոխությունների ուղի են: Ընդ որում, որոշ աշխարհաքաղաքական կենտրոնների և խաղացողների համար՝ դրական, իսկ առանձին դեպքերում՝ բացասական՝ այլ սուբյեկտների համար (որոնք, օրինակ, հայտնվել են տվյալ նախագծերից դուրս կամ ռազմական պարտությունների և կախյալ վիճակի պատճառով իրենց ազգային շահերին հակառակ հարկադրված են եղել հանցակիցներ դառնալ):

Փաստորեն, տրանսպորտային հաղորդակցություններն ազգային և համաշխարհային տնտեսության «արյունադար անոթներն» են: Պատմական մեծ գետերը, ծովային և օվկիանոսային, երկաթուղիներն ու մայրուղիները, համաշխարհային տեղեկատվական մայրուղին ձևավորում են մեր մոլորակի հաղորդակցման շրջանակը և հիմք հանդիսանում միջքաղաքակրթական երկխոսության համար:

Մինչդեռ, միջազգային տարանցիկ հաղորդակցությունները մշտապես ուղեկցում են նման նախագծերի շահառուների տնտեսական զարգացմանը, փոխում համաշխարհային առևտրի և աշխարհաքաղաքականության ուրվագծերը: Հաճախ միջազգային տրանսպորտային հաղորդակցությունների նոր երթուղիների որոշման գործընթացը, որը բխում է համաշխարհային խաղացողների ազգային շահերի բնույթից, ձևավորվում է բուռն աշխարհաքաղաքական մրցակցության և հակամարտող հարաբերությունների պայմաններում, դառնում նվաճողական քաղաքականության հետևանք և կայսերական հավակնությունների իրականացման միջոց: Արտահանման-ներմուծման գործառնությունների առանցքային դերակատարների (ասել է թե՛ համաշխարհային տնտեսության) շահերի հավասարակշռության խախտումը խթանում է արտաքին սպառնալիքների, հակասական ընդհարումների աճը և բացասաբար է անդրադառնում տարածաշրջանային և համաշխարհային անվտանգության վիճակի վրա:

Միջազգային տրանսպորտային միջանցքների կարևոր երթուղիների վերջնական որոշման գործընթացում նման բացասական միտումը հաճախ ուղեկցվում է տեղային և տարածաշրջանային պատերազմներով: Ընդամին, հակամարտող կողմերին աջակցում են հակադիր աշխարհաքաղաքական կենտրոնները, որոնք, հաճախ իրենց շահերից ելնելով, շահագործում են տեղական հակասությունները՝ կարևոր տարածքների և դրանց միջով անցնող հաղորդակցությունների նկատմամբ սեփական վերահսկողությունը հաստատելու համար՝ միջազգային տրանսպորտային միջանցքների ճակատագրի և

ապրանքների տարանցման վրա հետագա ազդեցության նպատակով: Մասնավորապես, ինչպես իրենց գործունեության, այնպես էլ՝ ոչ շահավետ երթուղին արգելափակելու առումով, եթե նախագծի իրականացումը հակասում է ազգային շահերին կամ կայսերական նկրտումներին:

Հարկ է նշել, որ միջազգային տրանսպորտային միջանցքները (ՄՏՄ) ինչպես ծնվում են՝ հաշվի առնելով տնտեսական և աշխարհաքաղաքական շահերի համադրումը, այնպես էլ դադարում են գոյություն ունենալ նույն պատճառներով: Հակառակ դեպքում, նույն «Մեծ Մեդաքսի ճանապարհը», որը մեկ անգամ հայտնվել էր անտիկ դարաշրջանում, կշարունակվեր մինչև մեր օրերը: Եվ չնայած ժամանակակից աշխարհն այս նախագծին կրկին վերադառնում է պատմական պարույրի նոր փուլում, սա արդեն նոր տեխնոլոգիական Չինաստանի նոր տարանցիկ ուղի է (ներառյալ՝ ինչպես արտահանման տեսականիով, այնպես էլ հավանական այլընտրանքային երթուղիներով): ՄՏՄ-ն ծնվում է՝ հաշվի առնելով օբյեկտիվ տնտեսական և աշխարհաքաղաքական փոփոխությունները, դառնում բազմազան հակասությունների հետևանք, իսկ երբեմն ուղեկցվում տարբեր ինտենսիվության և ընդգրկման ծավալների հակամարտություններով: Այնուամենայնիվ, ի վերջո, ՄՏՄ նախագծի իրականացումը ենթադրում է դրա գործունեության խիստ անվտանգության ռեժիմի զուգահեռ ապահովում (ներառյալ միջազգային իրավական, տեխնիկական, ռազմական, հակաահաբեկչական և այլն):

Պարզ ասած, ոչ ոք մեծ ներդրումներ չի կատարի երկար բազմակիլոմետրանոց տարանցիկ հաղորդակցությունների և միջանցքների (ներառյալ ավտոմոբիլային, երկաթգծային, օդային, ծովային, էներգետիկ, մալուխային) կառուցման գործում, եթե երկրները (տարածաշրջաններն ու մայրցամաքները) միացնող այս երթուղու որոշակի մասում (հատվածում) պահպանվում է ռազմական հակամարտության սպառնալիքի բարձր աստիճան կամ միջազգային ահաբեկչության և դիվերսիոն պատերազմի հավանականություն:

Նշված թեզը հաստատող վառ օրինակներից մեկը 20 և 21-րդ դարերի սահմանագծին Թուրքիայի արևելքում և հարավ-արևելքում քրդական ապստամբական շարժման սպառնալիքի տեղայնացումն է՝ Ադրբեջանի, այսպես կոչված, «դարի պայմանագրերի» իրականացման համար՝ ուղղված Ռուսաստանի շրջանցմամբ համաշխարհային շուկաներ կասպիական նավթի և գազի տարանցման այլընտրանքային ուղու ձևավորմանը:

Այսպես, 1999 թ. փետրվարին անցկացվեց ԱՄՆ-ի, Իսրայելի և Թուրքիայի հատուկ ծառայությունների համատեղ գործողություն՝ Քենիայում Հունաստանի դեսպանի նստավայրում Քրդստանի աշխատավորական կուսակցության (ՔԱԿ) առաջնորդ Ա. Օջալանի ձերբակալության համար: ՔԱԿ-ի ղեկավարն այն ժամանակ սպառնացել էր

ակտիվ դիվերսիոն-խափանարար գործողություններ կատարել Թուրքիայի տարածքում՝ ադրբեջանական նավթի և գազի տարանցման հավանական երթուղու երկայնքով: Նման հեռանկարը սպառնալիք կստեղծեր ոչ միայն Թուրքիայի Հանրապետության անվտանգության, այլև ԵՄ երկրների, ինչպես նաև արևմտյան և թուրքական խոշորագույն էներգետիկ ընկերությունների (ներառյալ՝ *British Petroleum, Pennzoil, Amoco, Total Energies, BOTAS* և այլն) ֆինանսատնտեսական շահերի համար: Այդ առումով խաղաղույթ էր կատարվել Աբդուլլահ Օջալանի ձերբակալության և ցմահ բանտարկության վրա, ինչն Անատոլիայում քրդական շարժմանը զրկեց միանձնյա առաջնորդից:

Թուրքիայում քրդական սպառնալիքի տեղայնացումը նպաստեց 1999 թ. նոյեմբերին ԵԱՀԿ Ստամբուլյան գազաթնաժողովում ադրբեջանական նավթի՝ Ռուսաստանի շրջանցմամբ Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա գլխավոր տարանցիկ երթուղու որոշմանը: Այն ժամանակ Ռուսաստանը ստիպված էր արդարացնել Չեչնիայում սահմանադրական կարգի հաստատման իր ռազմական գործողությունները, սակայն ձեռքից բաց թողեց Ադրբեջանից կասպիական նավթի տարանցման հարցը:

Ըստ էության, նույն 1999-ի ամռանը չեչենական խմբավորումների «*արշավանքը*» դեպի Դաղստան (Կարամախի և Չաբանմախի), իբր, Հյուսիսային Կովկասում Իսլամական համադաշնությունը ստեղծելու նպատակով, պարզվեց, որ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Թուրքիայի հատուկ ծառայությունների հատուկ գործողության մի մասն էր՝ Բաքվից ռուսական նավթի տարանցիկ ուղին արգելափակելու նպատակով: Այդ ժամանակ Չեչնիան փաստացի կառավարվում էր տեղի անջատողականների (Բասաև-Յանդարբիև-Մասխադով) կողմից և արգելափակում էր Բաքու-Գրոզնի-Նովոռոսիյսկ նավթամուղը: Մոսկվան Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևին առաջարկել էր նույն երթուղին, բայց շրջանցելով Չեչնիան (այսինքն՝ Դաղստանից Ստավրոպոլ և այնուհետև՝ Նովոռոսիյսկ): Սակայն, դրան ի պատասխան, չեչեն գրոհայիններն արտաքին հրահանգով որոշել էին հրի մատնել Դաղստանը և խափանել ադրբեջանական նավթի միջազգային տարանցման ռուսական վերահսկողության բոլոր ծրագրերը:

Այլ կերպ ասած, ՆԱՏՕ-ի երկրների և նրանց դաշնակից Իսրայելի հատուկ ծառայությունների երկու հատուկ գործողությունների գնով Արևմուտքին հաջողվեց հաստատել Ադրբեջանից կասպիական նավթի արտահանման հիմնական երթուղու սեփական տարբերակը, ինչը նրանց ապահովեց աշխարհատնտեսական մուտք դեպի Հարավային Կովկաս և նոր մուլտիմոդալ միջազգային տրանսպորտային միջանցքների ձևավորում: Իսկ այսօր, յուրացնելով Հարավային Կովկասը, Թուրքիան և Արևմուտքը (ԱՄՆ և Եվրոպա) փորձում են իրենց ազդեցությունը տարածել հետխորհրդային հարավ-արևելքի, այսինքն՝ Կենտրոնական Ասիայի ռեսուրսներով հարուստ տարածաշրջանի վրա:

Արդյունքում, 1999 թ. աշնանը ԱՄՆ նախագահ Բ. Բիլնթոնի մասնակցությամբ ԵԱՀԿ Ստամբուլյան գագաթնաժողովը, սահմանեց Ադրբեջանից Վրաստանի տարածքով դեպի Թուրքիա և Եվրոպա տարանցիկ տրանսպորտային-էներգետիկ հաղորդակցությունների հիմնական երթուղին: Արևմուտքը միլիարդավոր դոլարներ է ֆինանսավորել նավթի և գազի խողովակաշարերի, մայրուղիների և երկաթուղիների ցանցի կառուցման համար 21-րդ դարի առաջին քառորդում Լոնդոնի, Վաշինգտոնի և Անկարայի նմանօրինակ ռազմավարությունը հանգեցրեց «Հարավային տրանսպորտային միջանցքի» (ՀՏՄ) ձևավորմանը և Հարավային Կովկասում՝ ի դեմս Ադրբեջանի, աշխարհաքաղաքական կենտրոնի ձևավորման նախագծի իրականացմանը: Վերջինս, իր աշխարհագրական դիրքի շնորհիվ, անգլոսաքսոնների և Թուրքիայի համար առանցքային հետաքրքրություն է ներկայացնում Կենտրոնական Ասիա դուրս գալու ճանապարհին՝ պանթուրանիզմի դոկտրինի և ժամանակակից Թյուրքական պետությունների կազմակերպության (ԹՊԿ) քողի ներքո:

ՄՏՄ-ի օպտիմալ երթուղիների ուժային լուծման մեկ այլ օրինակ է Գազայի հատվածում շարունակվող արաբա-իսրայելական պատերազմը: Մասնավորապես, երկրի հարավում տվյալ տարածքի էթնիկ զտմանն ուղղված (փաստորեն Գազայից երկու միլիոն արաբ բնակչության արտաքսումը) Թեյ Ավիվի քաղաքականությունը մեծամասամբ հետապնդում է Միջերկրական ծովի ափին իր հարավային նավահանգիստների լիակատար վերահսկողության հաստատման խնդիր, որտեղով նախատեսվում է Հնդկաստանից Եվրոպա ապրանքների տարանցման ծովային երթուղիներից մեկի անցումը:

ԽՍՀՄ փլուզմամբ և Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում հաստատված աշխարհակարգի երկբևեռ համակարգի վերացմամբ միջազգային հանրությունը հայտնվեց անկայուն գործընթացների և զլոբալ փոփոխությունների վիճակում: Պայարզվեց, որ «սառը պատերազմի» և Խորհրդային Միության ինքնակործանման արդյունքում իրեն միանձնյա «հաղթող» ճանաչելու և Վաշինգտոնի գերիշխող առաջնորդության ներքո միաբևեռ աշխարհ ձևավորելու ԱՄՆ-ի հույսերն անիրատեսական են առարկայական հակասությունների պատճառով և ուժային տարբեր կենտրոնների առկայությամբ, որոնք հավակնում են պահպանելու համաշխարհային հավասարակշռությունը և անվտանգության ստեղծելու բազմաբևեռ համաշխարհային կառույց:

2007 թ. փետրվարին Մյունխենյան անվտանգության միջազգային համաժողովում Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը հրապարակավ հերքեց ԱՄՆ-ի համաշխարհային տիրապետության ռազմավարությունը և կոչ արեց հարգել ժամանակակից աշխարհի բազմազանությունը: 21-րդ դարի առաջին քառորդի հետագա ժամանակահատվածը վկայում է, որ աշխարհն ընկղմվել է ճգնաժամի և հակասությունների,

հակամարտությունների և տեղային պատերազմների քառսային գործընթացի մեջ: Միջազգային անվտանգության նախկին համակարգը և ՄԱԿ-ի հաստատությունն անհամարժեք էին ժամանակի նոր մարտահրավերներին, անարդյունավետ՝ միջազգային հանրության թույլ և անպաշտպան ուժերի դեմ ոմանց ռազմական կամայականությունները կասեցնելու ճանապարհին: Դրա վկայությունն են Իրաքում և Լիբիայում տեղական իշխող վարչակարգերի վերացմամբ տեղի ունեցած պատերազմը, վրաց-ռուսական և ռուս-ուկրաինական հակամարտությունները, Լեռնային Ղարաբաղում 44-օրյա պատերազմը և հայ բնակչության տեղահանությունը, Սիրիայում չավարտված քաղաքացիական պատերազմը և Գազայի հատվածում շարունակվող պաղեստինա-իսրայելական ռազմական հակամարտությունը:

Ըստ այդմ, գլոբալ փոխակերպումների ժամանակահատվածում օբյեկտիվորեն ի հայտ են գալիս նոր միջազգային տրանսպորտային հաղորդակցությունների և միջանցքների ձևավորման պայմանները, որոնք կարտացոլեն նոր աշխարհակարգի ուրվագծերը, նոր վերընթաց ուժերը և համաշխարհային առևտրի նոր տեսքը: Բնականաբար, հաճախ հիմնական արտահանման ապրանքն ինքնին կարող է դառնալ բարձր (ներառյալ) հակամարտային մրցակցության առարկա:

Օրինակ՝ 20-րդ դարից սկսած, երբ նավթը նոր նշանակություն ձեռք բերեց համաշխարհային տնտեսության մեջ և սկսեց շահագործվել արդյունաբերական նպատակներով, մարդկության պատմությունը գիտի տարբեր աստիճանի ինտենսիվության բազմաթիվ հակամարտություններ և պատերազմներ, որոնք մղվել են նավթի տիրապետման և վերահսկման իրավունքի համար, որոնք այժմ մխում են նավթի պատճառով և կարող են բռնկվել նոր ուժով:

Խորհրդային Միությունը փորձում էր ուշադիր վերաբերվել իր բնական պաշարներին՝ ապահովելով հումքային հարստության շահագործման տարածաշրջանային հավասարակշռությունը և միևնույն ժամանակ թույլ չտալով խախտումներ նույն միութենական հանրապետությունների նկատմամբ, որոնց ֆիզիկական աշխարհագրությունն առանձնանում էր նույն նավթի և գազի հսկայական պաշարներով: Այդ իսկ պատճառով նախախորհրդային և խորհրդային շրջանների ազգային ծայրամասերի նկատմամբ Ռուսաստանին կայսերական ծախսերի մեջ մեղադրելու բոլոր փորձերը չեն համապատասխանում իրականությանը: Այլապես այսօր, օրինակ, նույն մերձկասպյան երկրները (Ադրբեջան, Ղազախստան, Թուրքմենստան) չէին ունենա ռազմավարական հումքի նշված տեսակների այդքան մեծ պաշարներ, հետխորհրդային շրջանում որոնց հասանելիության համար նկատվում է առանցքային համաշխարհային խաղացողների և տարածաշրջանային կարևոր երկրների բացահայտ պայքար:

Այնուամենայնիվ, 1990–2000-ական թվականներին ԽՍՀՄ փլուզումից հետո մենք ականատես եղանք դեպի Ադրբեջանի կասայան նավթ և գազ Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Թուրքիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և այլ խոշոր էներգետիկ ընկերությունների՝ Ռուսաստանի շրջանցմամբ նոր այլընտրանքային՝ միջազգային տրանսպորտային-էներգետիկ միջանցքի իրականացմանը: Արդյունքում, 1994–2020 թթ. իրականացվել է ՄՏՄ մուլտիմոդալ նախագիծը (ներառյալ Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղը, Բաքու–Թբիլիսի–Էրզրում գազատարը, Տրանսանատոլիական (TANAP) և Տրանսադրիատիկ (TAP) գազատարները, Բաքու–Թբիլիսի–Կարս երկաթգծային մայրուղին):

Այսօր Անդրկովկասում հայտնվել է հարավկովկասյան նոր տրանսպորտային-էներգետիկ միջանցք, որը կարող է դառնալ չինական «Մեկ գոյրի, մեկ ճանապարհ» ՄՏՄ-ի առանցքային կապող հատվածներից մեկը «Միջին միջանցք» նախագծի շրջանակներում: Այլ կերպ ասած, աշխարհաքաղաքական հակառակորդները, որոնք միշտ էլ ուշադիր են համաշխարհային և տարածաշրջանային վերափոխումների նկատմամբ, ավանդաբար օգտագործում են իրենց մրցակիցների ժամանակավոր թուլությունը սեփական հնարավորություններն ընդլայնելու և ուժերի պատմականորեն ձևավորված հավասարակշռությունը փոխելու համար: Հաճախ աշխարհաքաղաքական հավակնություններն այս դեպքում որոշիչ են դառնում նոր ՄՏՄ-ների կարծես թե տնտեսական նախագծերի իրականացման ճանապարհին:

Մասնավորապես, տնտեսության և աշխարհաքաղաքականության հարաբերություններում նման անհավասարակշռությունն ակնհայտ դրսևորվեց աշխարհագրական բոլոր այլընտրանքային ուղիներից ամենաերկար (1730 կմ) և, համապատասխանաբար, ամենաթանկ (ավելի քան 3 մլրդ դոլար) Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղի իրականացման ժամանակ, երբ գործում էր Բաքու–Գրոզնի–Նովոռոսիյսկը անվտանգ այլընտրանքը:

Որոշ փորձագետներ, գնահատելով 1990-2000-ական թվականներին տեղային հակամարտությունները Կովկասում (ներառյալ՝ ղարաբաղյան, արխազական, չեչենական), չեն բացառում, որ դրանք արհեստականորեն նախաձեռնվել են շահագրգիռ օտարերկրյա պետությունների և նրանց հատուկ ծառայությունների (մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Թուրքիայի, Իսրայելի) մասնակցությամբ՝ Ռուսաստանի ՄՏՄ երթուղու արգելափակման և կասայան նավթի ու գազի տարանցման համար: 2020 թ. իմ հրապարակումներից մեկում ես ստիպված էի նշել, որ «1994 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Արևմուտքի երկրների և Թուրքիայի հափուկ ծառայությունները, օգտագործելով Ադրբեջանը, նախաձեռնել են ներքին ռազմական հակամարտություն Ռուսաստանում՝ Չեչնիա էպիկենտրոնով, որպեսզի արգելափակեն ռուսական նավթամուղը»³:

³ Սվարանց Ա., Լեռնային Ղարաբաղն ընդդեմ ադրբեջանա-թուրքական ահաբեկչական կոալիցիայի (ռուս.). Новости САР. 2020 թ. հոկտեմբերի 27:

Այսպիսով, միջազգային տրանսպորտային միջանցքները գլոբալ աշխարհաքաղաքական փոխակերպումների և ինտեգրման գործընթացների պայմաններում հանդիսանում են համաաշխարհային տնտեսության զարգացման կարևոր գործոններ: ՄՏՄ-ն իր մեջ ներառում է միջազգային տնտեսական հարաբերությունների տարբեր մասնակիցների միջև կայուն տրանսպորտային հաղորդակցությունների ստեղծում ու շահագործում:

ՄՏՄ-ն նշանակում է տարանցիկ տրանսպորտային հաղորդակցությունների երթուղիներ, որոնք մի շարք երկրներ միացնում են միասնական տնտեսական համակարգի մեջ՝ ուղևորների և ապրանքների երթևեկության համար: Միևնույն ժամանակ, այս առումով հաճախ կարելի է գտնել նաև «մուլտիմոդալ ՄՏՄ» անվանումը, այսինքն՝ խոսքը տրանսպորտային և հաղորդակցական կապերի մի քանի մոդուլների (տեսակների) մասին է (ներառյալ ավտոմայրուղիները և երկաթուղիները, խողովակաշարերի ցանցը, էլեկտրահաղորդման գծերը)⁴:

Համապատասխանաբար, ՄՏՄ-ի մուլտիմոդալ նախագիծը ենթադրում է ապրանքների խոշոր արտադրողի կետից մինչև խոշոր վճարունակ սպառողի կետ շահավետ տարանցիկ երթուղիների որոշում, ներառում է տարբեր տեսակի տրանսպորտային և էներգետիկ կապերի ցանց (ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, ծովային, խողովակաշարային, մալուխային)՝ կանոնավոր ռեժիմով ապրանքների և ուղևորների փոխադրման համար և համապատասխան ճանապարհային-տրանսպորտային հաղորդակցությունների (մայրուղիների, երկաթգծային ուղիների, նավահանգիստների, օդանավակայանների, մաքսային և սահմանային հսկողության էլեկտրոնային համակարգերի և այլնի ձևավորմամբ):

Ինքնին աշխարհագրությունը (հատկապես ելք դեպի ծովային սահմաններ) երբեմն որոշում է ՄՏՄ-ի կարևորությունը: Այսօր (ինչպես և երեկ) դժվար է գերազնահատել Սևծովյան նեղուցների տնտեսական և ռազմաքաղաքական նշանակությունը, որոնք ապահովում են մուտք-ելք դեպի Սև ու Միջերկրական ծովեր և Ատլանտյան օվկիանոս: Եվ նա, ով վերահսկում է Բոսֆորն ու Դարդանելը, մնում է համաաշխարհային աշխարհաքաղաքականության առանցքային դերում: Իր հերթին, 1869 թ. նոյեմբերի 17-ին Սուեզի ջրանցքի բացումը հեղափոխություն էր համաաշխարհային ծովային առևտրում: Մասնավորապես, Եգիպտոսում բաց, նավարկային ջրանցքի կառուցումը թույլ տվեց միացնել Միջերկրական և Կարմիր ծովերը՝ ապահովելով Հնդկականից Ատլանտյան օվկիանոս ելքի ամենակարճ ծովային ուղին, քանի որ նավերն այլևս կարիք չունեին շրջանցելու Աֆրիկան, իսկ ջրային ուղին կրճատվեց 8.000 կմ-ով:

⁴ Տես Ասիական Ռուսաստանի տրանսպորտային միջանցքներ. կարգավիճակ և հեռանկարներ, https://bstudy.net/650516/politika/mezhdunarodnye_transportnye_koridory_natsionalnaya_bezopasnost_rossii (բեռնման օրը: 23.09.2024):

ՄՏՄ-ները, որպես կանոն, խթանում են այն պետությունների ազգային տնտեսությունների զարգացումը, որոնց տարածքով դրանք անցնում են: Միևնույն ժամանակ, դրանք կարող են համարվել նաև որպես ՄՏՄ դիզայներների «փափուկ ուժի» կարևոր գործիքակազմ, ծրագրի թույլ մասնակիցների նկատմամբ ավելի ուժեղ սուբյեկտների նվաճման քաղաքականության մաս: Բոլոր դեպքերում, այս խնդիրն հարուցում է քաղաքականության, տնտեսագիտության և անվտանգության հիմնավոր հետաքրքրությունը, ինչպես նաև ակադեմիական գիտության (քաղաքագիտություն, տնտեսագիտություն, սոցիոլոգիա, իրավագիտություն և այլն) հետազոտական հետաքրքրությունը:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին Ռուսաստանի ակադեմիական պրակտիկայում հայտնվել են ՄՏՄ-ին առնչվող հարցերի վերաբերյալ մեծ թվով բազմազան գիտական աշխատություններ (ատենախոսություններ, մենագրություններ, հոդվածներ, զեկույցներ): Առանձնահատուկ հետաքրքրություն են առաջացնում մի շարք հեղինակների (այդ թվում՝ Ի. Աբասալիևի, Լ. Ալբրեխտի, Պ. Բիրյուկովի, Լ. Վարդոսկու, Ա. Վոլոդինի, Վ. Վորոնովի, Ն. Գրիգորևի, Ա. Գորոխովայի, Ե. Գլադսկիխի, Ի. Երմակովի, Կ. Ժուրավյովի, Մ. Կոմովի, Վ. Լազարևի, Է. Լևիտինի, Մ. Տուրանայի, Կ. Խլոպովի, Է. Շուստովայի և այլոց) հետազոտությունները, որոնք նվիրված են ՄՏՄ-ի ձևավորման և զարգացման տեսական ու մեթոդական հիմունքներին, ինչպես նաև, որոշակի երկրների, տարածաշրջանների և մայրցամաքների նկատմամբ կիրառվող իրադարձությունների դինամիկայի վրա ՄՏՄ-ի ազդեցության տնտեսական և աշխարհաքաղաքական ասպեկտներին⁵:

Կարելի է ասել, որ ՄՏՄ-ի հետ կապված հարցերի ամբողջության որակյալ ուսումնասիրությունը նպաստում է ոչ միայն մասնագետների հանրության, այլև ամբողջ գիտական դպրոցների ձևավորմանը, որոնց տեսակետները կարող են զուգակցվել և հակասել, քանի որ հաճախ եզրակացություններն արձանագրում են ոչ միայն ՄՏՄ-ի նոր նախագծերի ձևավորման օբյեկտիվ իրականությունը, այլև արտացոլում իրենց իսկ՝ փորձագետների քաղաքական ներգրավվածությունը՝ հաշվի առնելով նրանց բնակության երկրների քաղաքական վերաբերմունքը և քաղաքացիական պատկանելությունը:

⁵ Տես՝ Աբբասալիև Ի. Ս. Տրանսպորտային միջանցքների դերը միջազգային համագործակցության մեջ (Կասպից տարածաշրջանի օրինակով) (ռու.), Вестник Северного (Арктического) федерального университета. Серия гуманитарные и социальные науки. Մ., 2022. Հ. 22. № 3; Վոլոդին Ա. Գ., Վոլոդինա Մ. Ա. «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի նախագիծը՝ որպես Ռուսաստանի արտաքին տնտեսական կապերի հնարավոր ամրապնդման գործոն // Գլոբալ վերափոխումների ուրվագծեր. Քաղաքականություն, տնտեսություն, իրավունք (ռու.), Մ., 2019. Թ. 12. № 6. Էջ 29-42; Սվարանց Ա. Լեռնային Ղարաբաղն ընդդեմ ադրբեջանա-թուրքական ահաբեկչական կոալիցիայի (ռու.), Новости САР. 2020. 27 հոկտեմբեր; Տուրանա Մ. Օ., Գորոխովա Ի. Վ. Տրանսպորտային ոլորտում ազգային շահերի նշանակությունը Ռուսաստանի ազգային անվտանգության ապահովման համար (ռու.), Федерализм: Մ., 2022. Թ. 27. № 3 (107). Էջ 125-138 և այլն:

Արդիականացվում է ազգային (պետական), տարածաշրջանային և գլոբալ անվտանգության վրա ՄՏՄ-ի ազդեցության տնտեսական և աշխարհաքաղաքական ասպեկտների հետ կապված մի շարք հարցերի ուսումնասիրությունը: Հարավային Կովկասն, օրինակ, իր ֆիզիկական աշխարհագրության և տարածաշրջանի սուբյեկտների աշխարհաքաղաքական տարբեր ուղենիշների, արտաքին խաղացողների շահերի տարբեր ներկայանակի շնորհիվ, որոնք շահագրգռված են այստեղ սեփական ազդեցության պահպանմամբ կամ հաստատմամբ, այսօր մի կողմից վերածվում է դրսի մեծ ուշադրությունը հարուցած շրջանների, իսկ մյուս կողմից՝ Արևելք-Արևմուտք և Հյուսիս-Հարավ ուղղություններով ապրանքների միջազգային տարանցման առանցքային կապող օղակի (խաչմերուկի):

Հարավային Կովկասը հանդես է գալիս որպես կարևոր երթուղի նախագծվող մոլոտիմոդալ ՄՏՄ-ների, որոնք արտաքին և ներքին շահերի հավասարակշռման պայմաններում կարող են բերել տարածաշրջանային խաղաղություն և անվտանգություն: Սակայն նման հավասարակշռություն դեռևս չի նկատվում, և տարածաշրջանում պահպանվում է հակասությունների և հակամարտությունների սաստկացման վտանգը:

2. Արդի համաշխարհային և տարածաշրջանային առանցքային խաղացողների հակամարտային շահերը ՄՏՄ-ների ձևավորման գործընթացում

Ժամանակին Վ. Լենինը արդարացիորեն պնդում էր, որ «Քաղաքականությունը տնտեսության խտացված արտահայտությունն է»⁶: Այս բանաձևն ապացուցված է ժամանակի ընթացքում, քանի որ պետության խնդիրը զարգացած տնտեսության ստեղծումն է, առանց որի կառավարության համար դժվար է պահել իշխանությունը և ապահովել երկրի անվտանգությունն արտաքին սպառնալիքներից: Եթե ՄՏՄ-ների նախագծերի իրականացման ընթացքում տնտեսական շահերի պրիզմայով դիտարկենք արդի առանցքային համաշխարհային և տարածաշրջանային պետությունների քաղաքականությունը, ապա կարող ենք եզրակացնել, որ այնտեղ, որտեղ մեծ փողեր կան, միշտ էլ շահերի բախում է ի հայտ գալիս: Բնականաբար, հարուստ երկրները մշտապես ցանկանում են էլ ավելի հարստանալ (ընդ որում, հաճախ այլ՝ ավելի թույլ և հետամնաց, պետությունների շահերի հաշվին):

ՄՏՄ-ի կառուցողական նշանակության վերաբերյալ փորձագետ Ի. Աբասալիևը նշում է. «Միջազգային տրանսպորտային միջանցքներն, ընդհանրապես, և եվրասիական միջանցքները, մասնավորապես, ծառայում են որպես միջազգային համագործակցության

⁶ Լենին Վ. Ի. Եվս մեկ անգամ արհմիությունների, ներկայիս պահի և տ. Տրոցկու և Բուխարինի սխալների մասին // PSS. 5-րդ Հր. Մ., «Քաղաքական գրականություն», 1969, հատ. 42, էջ 278:

սկզբունքորեն նոր մեխանիզմ և պետությունների հարաբերությունների աճող փոփոխականության հաղթահարմանն ուղղված գործոն: Համաշխարհային քաղաքական լանդշաֆտի անկայունության և արտաքին քաղաքական դիսկերի ավելացման հետ կապված ազգային օրակարգերի արդիականացման միտումը, ի վնաս միջազգային ինտեգրման գործընթացների, կառուցողականորեն հաղթահարում է ստանում կազմակերպչական ձևերով»⁷:

Այլ կերպ ասած, Ի. Աբասալինն առանձնացնում է ՄՏՄ-ի դրական դերը, քանի որ նման միջազգային տնտեսական նախագծերը, նրա կարծիքով, նպաստում են պետությունների միջև ճգնաժամային գործընթացների և փոփոխական հարաբերությունների հաղթահարմանը, հակամարտային ազգային օրակարգը տեղափոխում են ավելի կառուցողական հուն՝ առևտրային և միջազգային ինտեգրման կապերի զարգացման միջոցով: Ընդհանուր առմամբ, այս տեսակետը շատ կառուցողական է, եթե իրականում ՄՏՄ-ի բոլոր կողմերն ու մասնակիցները պաշտպանում են հավասար իրավունքների, կայունության, անվտանգության և փոխշահավետ գործընկերության հարգման սկզբունքները, այսինքն՝ բացառում են ինքնիշխանության խախտումը, աշխարհաքաղաքական հավակնությունները և ուժի իրավունքը:

Սակայն ՄՏՄ-ի նման դրական բնութագիրը, որը ժխտում է առաջատար աշխարհաքաղաքական խաղացողների հակասական շահերի առկայությունը նման նախագծերի մշակման և իրականացման փուլում, վկայում է հետազոտության առարկայի թերի ներկայացման մասին (կամ ՄՏՄ-ի այս կամ այն հասկացությանը կողմնակալ մոտեցում մասնակիցների, երթուղիների և վերահսկողության մեխանիզմների առումով): Հակառակ դեպքում ՄՏՄ-ների բոլոր նախագծերը, անկախ նախաձեռնողի և մշակողի ինդեքսից, կստանային արտաքին սուբյեկտների միանշանակ աջակցությունը. ամեն ինչում կգերակշռեր իրատեսությունն ու ինտեգրման օգուտը:

Մեր կարծիքի համոզիչ օրինակներից մեկը հայ-ադրբեջանական հարաբերությունների ներկա վիճակն է: Ինչպես հայտնի է, Ադրբեջանը, չկատարելով 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ (Ադրբեջան, Հայաստան, Ռուսաստան) համաձայնագրի որևէ կետ, որպես Հայաստանի հետ խաղաղության պայմանագրի ստորագրման պայմաններից մեկը՝ պնդում է նշված առցանց-հայտարարության 9-րդ կետը, այսինքն՝ այսպես կոչված, «*Ձանգեզուրի միջանցքի*» անարգել և անվերահսկելի բացում Նախիջևանի Ինքնավար Հանրապետության (ՆԻՀ) և այնուհետև Թուրքիայի հետ կապ պահպանելու համար:

⁷ Աբասալին Ի.Ս. Տրանսպորտային միջանցքների դերը միջազգային համագործակցության մեջ (Կասպից տարածաշրջանի օրինակով) (ռու.), Вестник Северного (Арктического) федерального университета. Серия гуманитарные и социальные науки. У., 2022, հատ. 22. № 3:

Հայաստանի կառավարությունը սկզբունքորեն համաձայն է քննարկել տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակումը (ներառյալ՝ Մեղրիի շրջանով Նախիջևանի հետ Ադրբեջանի կապը), սակայն հրաժարվում է այդ հաղորդակցությունը դիտարկել միջանցքի և սեփական տարածքի նկատմամբ ինքնիշխանության կորստի տրամաբանության մեջ: Տվյալ հակասությունը մի քանի տարի շարունակվում է մնացյալ աշխարհի աչքի առաջ, բայց լուծում չի գտնում, հավանաբար, առանցքային արտաքին խաղացողների շահերի հակասության պատճառով:

Այլ կերպ ասած, ապրանքների տարանցման հեռանկարը և ֆինանսական շահույթը դեռևս համոզիչ փաստարկ չեն դառնում տարածաշրջանային շահերի և Հարավային Կովկասով հետաքրքրվող արտաքին ուժերի ընդհանրության համար: Իսկ եթե ԱՄՆ-ի նախագահ Դ. Թրամփի կողմից Չինաստանի հետ հայտարարված *«սակագնային պատերազմը»* հետագայում ևս պահպանվի, ապա Վաշինգտոնն ինչպե՞ս կհամաձայնի *«Միջին միջանցքին»*՝ Հարավային Կովկասի երկրներով, շրջանցելով նույն Ռուսաստանը, դեպի Արևմուտք (Թուրքիա և ԵՄ) չինական ապրանքների տարանցման պարագայում:

Մինչդեռ, պրակտիկան ցույց է տալիս, որ որոշ ՄՏՄ-ներ հաճախ մշակվում և իրականացվում են ի վնաս այլ խոշոր խաղացողների և փոքր երկրների շահերի, ունեն քաղաքական շարժառիթ՝ ուրիշների անվտանգության հաշվին տնտեսական և աշխարհաքաղաքական օգուտներ ստանալու համար: Որպես համոզիչ օրինակ կարելի է նշել Ադրբեջանից Վրաստանի տարածքով, Ռուսաստանի շրջանցմամբ, դեպի Թուրքիա և Եվրոպա Հարավային էներգետիկ և տրանսպորտային միջանցքի ձևավորման պատմությունը:

1990-ականների վերջերին Մեծ Բրիտանիային և ԱՄՆ-ին չհաջողվեց նշված ՄՏՄ-ն Հարավային Կովկասում իրականացնել ավելի ռացիոնալ, այսինքն՝ ավելի քիչ ֆինանսական ներդրումներով՝ Հայաստանի հարավում գտնվող նույն Զանգեզուրի երթուղով դրա երկարության կրճատմամբ: Որպես տվյալ նախագծին Հայաստանի մասնակցության և տարածաշրջանից Ռուսաստանի հետագա դուրս մղման փոխզիջումային պայման՝ ամերիկացիներն այն ժամանակ առաջարկում էին Երևանի և Բաքվի միջև տարածքային փոխանակման տարբերակ՝ որպես Ղարաբաղյան խնդրի լուծման ուղի (մասնավորապես՝ ԼՂԻՄ տարածքը Լաչինի միջանցքով հանդերձ, հանձնվում է Հայաստանին, իսկ Մեղրու շրջանի մի մասը՝ Ադրբեջանին): Սակայն այն ժամանակ այդ փոխզիջումը զարգացում չստացավ Բաքվում և Երևանում կարծիքների բևեռացման (մասնավորապես, Ադրբեջանում նախագահի արտաքին քաղաքականության գծով խորհրդական Վաֆա Գուլուզադեի և ԱԳ նախարար Թոֆիկ Զուլֆուգարովի հրաժարականի, իսկ Հայաստանում 1999 թ. հոկտեմբերի 27-ին խորհրդարանի գնդակահարության և վարչապետ Վազգեն Սարգսյանի ու ԱԺ նախագահ Կարեն

Դեմիրճյանի սպանության) պատճառով: Այսօր Զանգեզուրի երթուղու թեման կրկին արդիականացվում է չինական ՄՏՄ նախագծում «Միջին միջանցքի» առնչությամբ:

Արաբական Արևելքի երկրների (Սաուդյան Արաբիա եւ ԱՄԷ), Իսրայելի և Թուրքիայի շահերի բախումը բավականին ցայտուն արտահայտվում է հնդկական ՄՏՄ-ի դեպքում՝ պաղեստինյան Գազայի հատվածում տեղի ունեցած արձագանքի պարագայում:

Փորձենք հասկանալ 21-րդ դարի առաջին քառորդում ՄՏՄ նախագծերի իրականացման գործում հակասական շահերի էությունը՝ օգտագործելով համաշխարհային և տարածաշրջանային առանցքային խաղացողների օրինակը::

ԱՄՆ-ը, որը համաշխարհային հարթակում դիրքավորվել է որպես գլոբալ խաղացող, բառացիորեն բոլոր նշանակալի տնտեսական նախագծերում (ներառյալ ՄՏՄ-ն) ցույց է տալիս իր ներկայությունը (կամ որպես մասնակից նախագծող, կամ որպես կործանիչ-հակառակորդ): Միացյալ Նահանգները, որպես իր ընդդիմախոսների (մրցակիցների և հակառակորդների) վրա ճնշման միջոց, միջոցների բավականին հայտնի զինանոց է օգտագործում:

Մասնավորապես, դա կոչտ տնտեսական և ֆինանսական պատժամիջոցների քաղաքականություն է (օրինակ, Հյուսիսային Կորեայի, Իրանի, Ռուսաստանի և Չինաստանի հանդեպ), ֆինանսա-ներդրումային և տեխնոլոգիական աջակցությունը նոր տնտեսական կենտրոնների և հակակշիռների ձևավորման գործում (օրինակ, Չինաստան և Հնդկաստան), տեղային հակամարտությունների նախաձեռնում՝ ՄՏՄ-ի այս կամ այն նախագծերի արգելափակման կամ առաջխաղացման համար (օրինակ, Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում), ՄՏՄ-ի շահավետ և համաձայնեցված նախագծերում անմիջական (լրիվ կամ մասնակի) ներդրումներ, ամերիկյան անդրազգային կորպորացիաների միջոցով մասնակցությունը նոր ՄՏՄ-ներին:

Զբիգնև Բժեգինսկու «Շախմատային մեծ խաղատախտակը» գրքում, (1997թ) արտացոլված են ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական հրամայականները և ռազմավարությունը՝ 21-րդ դարում Եվրասիայի (առաջին հերթին՝ հետխորհրդային տարածքի) նկատմամբ վերահսկողություն հաստատելու համար: Զ. Բժեգինսկին ողջամտորեն կարծում էր, որ Կիևում արևմտամետ քաղաքական ռեժիմի հաստատմամբ Ուկրաինայի վերջնական հեռացումը Ռուսաստանից ԱՄՆ-ին թույլ կտա պահպանել միակ «համաշխարհային կայսրության» կարգավիճակը և բացառել Եվրասիայում նոր հզոր Ռուսական տերության վերածննդի հեռանկարը: Լինելով Մակքինդերի անգլո-սաքսոնական աշխարհաքաղաքական դպրոցի հետևորդ՝ Բժեգինսկին քաղաքականությունը դիտարկում էր ծովային և ցամաքային քաղաքակրթությունների դիմակայության համատեքստում:

Այդ իսկ պատճառով, Ռուսաստանի հերթական հզորացումը թույլ չտալու համար Զ. Բժեզինսկին առաջարկում էր Եվրասիա ներթափանցելու ռազմավարություն՝ հենվելով «աշխարհաքաղաքական կենտրոնների» կարգավիճակով իր կողմից ներկայացվող առանցքային երկրների վրա, հաշվի առնելով դրանց կարևոր աշխարհագրական դիրքը: Ամերիկացի աշխարհաքաղաքագետը երկրների այս խմբին է դասել Ուկրաինային, Թուրքիային, Իրանին, Ադրբեջանին և Հարավային Կորեային:

Անդրադառնալով հետխորհրդային հարավին՝ նա, մասնավորապես, նշել է. «Անկախ Ադրբեջանը, որը միացված է Արևմուտքի շուկաներին Ռուսաստանի կողմից վերահսկվող տարածքով չանցնող նավթատարներով, նաև է դառնում է Միջին Ասիայի էներգակիրներով հարուստ հանրապետություններ մուտք գործելու խոշոր մայրուղի առաջատար և էներգասպառող տնտեսությունների համար»⁸:

Այլ կերպ ասած, ԱՄՆ-ը, հաշվի առնելով Ադրբեջանի ֆիզիկական աշխարհագրությունը, այն առանձնացնում է որպես կարևոր միջազգային միջանցք (էներգետիկ և տրանսպորտային)՝ Արևմուտքը Կենտրոնական Ասիայի հետ կապելու համար՝ շրջանցելով Ռուսաստանը, ինչն էլ շահերի բախում է ստեղծում համաշխարհային առանցքային խաղացողների միջև:

Որպես հետխորհրդային տարածքում լայնածավալ ներդրման մեխանիզմ՝ Ռուսաստանին թուլացնելու և ավանդական պատմական ներկայության տարածաշրջաններից հետագայում տեղահանելու համար, Բժեզինսկին առաջարկել է որպես աշխարհատնտեսական գործիքակազմ օգտագործել Կասպից ավազանի, այնուհետև Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի բնական (առաջին հերթին՝ էներգետիկ) պաշարները, Ռուսաստանի շրջանցմամբ, համաշխարհային (հատկապես եվրոպական) շուկաներ արտահանելու համար:

Գնահատելով համաշխարհային շուկաներում Չինաստանի հզորացումը՝ ԱՄՆ-ն այժմ փորձում է հնարավորինս սահմանափակել չինական ապրանքների առևտրատնտեսական առաջընթացը: ԱՄՆ-ի նախագահ Դ. Թրամփի ներկայիս վարչակազմի կողմից Չինաստանի դեմ իրականացվող «սակագնային պատերազմը» ոչ միայն ամերիկյան շուկան չինական արտադրանքից պաշտպանելու փորձ է, ինչը Չինաստանի համար ավելի քան 700 մլրդ դոլար արժողությամբ հիմնական շուկան կորցնելու սպառնալիք է ստեղծում, այլև ազդանշան է չինական «Մեկ գույր, մեկ ճանապարհ» ՄՏՄ նախագծի ճանապարհին: Քանզի, հաշվի առնելով Ուկրաինայի հակամարտության պատճառով Եվրոպայի հակառուսական պատժամիջոցները և ԱՄՆ-ի հակաեվրոպական սակագները, Պեկինը կծգտի ընդլայնել իր ապրանքների արտահանումը ԵՄ շուկա: Այս առումով ԱՄՆ-ի և Չինաստանի շահերը կարող են կրկին բախվել Անդրկովկասյան տարանցիկ երթուղում:

⁸ Բժեզինսկի Զ., Շախմատային մեծ խաղատախտակ: (ռու.), Միջազգային հարաբերություններ, Մ., 1998, էջ 26:

